Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Utrayunt

391.99
Q-83

3

Մ. Տ. ՇԻՈՏ

ՄԵՐԶԵՑՈՒՄ

ԱՆՈՒՐՋՆԵՐ

Պուրժուազիայի եւ ազգոխի մերձեցումը... մի խնդիր է, որի լուծումը մի հսկայ գրական կը լինի Համայնականների սկզբունքի յաղթանակին։

Այդ խնդրի լուծումով ազգային կեանքը յառաջադիմական թռիչքներ գործած կը լինի։

ԲԱՐԻԶ
1903

891.99
Ч-83

01 JAN 2009
19 NOV 2010
891.99
Ա-83
28

Մ. Տ. ՇԻՈՏ

ՄԵՐԶԵՑՈՒՄ

ԱՆՈՒՐՋՆԵՐ

Պուրժուազիայի եւ ամբոխի մերձեցումը... մի խնդիր է, որի լուծումը մի հսկայ գրական կը լինի Համայնականների սկզբունքի յաղթանակին։

Այդ խնդրի լուծումով ազգային կեանքը յառաջադիմական թռիչքներ գործած կը լինի։

ԲԱՐԻԶ
1903

21.02.2013
21474

ԱՆՄԱՀԱՆՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԱՀՈՒԱՆ, ՏԱՍՆԱՄԵԿԻ

ԵՒ ՄՇԱԿԻ ԵՐԵՍՆԱՄԵԿԻ

ԱՌԹԻՒՆ

ՆՈՒԻՐԷ

Մ. Տ. ՇԻՈՏ

ՄԵՐԶԵՑՈՒՄ

(ԱՆՈՒՐՋՆԵՐ)

I.

Մի հայ բեռնակիր (համալ) N. երկրի X. քաղաքում ամբողջ հինգ տարի բեռնակրութիւն անելէ յետոյ, երբ տեսաւ որ այդ զբաղումով — բեռնակրի ստացած անորոշան վարձատրութեամբ — կարելի չէ մի քանի կոպէկ սև օրուան համար յետ ձգել կամ մի համեստ ապագայ պատրաստել, իւր աննախանձելի դրութեան վրայ երկար մտածելէ յետոյ՝ մի շատ տարօրինակ միտք յղացաւ։ — Նա վճռեց, որ այնուհետեւ իր մի ժամուան ֆիզիքական աշխատանքը աժան չի ծախէ։

— Ա՛ռ նուազն եթէ 20 դահեկան չիտան (մօտ 1 ½ բուբլի) շալակ տանելու չեմ։ Եւ այդ վճիռն անյեղաշրջելի կացուցանելու համար դրօշմեց նրա ճակատին մի խոշորկեկ երդում։ Եւ այնուհետև գնաց, հրապարակի մէկ անկիւնում կանգնեցաւ։ Նա գիտէր լաւ, որ մի շալակի համար 20 դահեկան վճարող, եթէ երբէք լինէր էլ, շուտով չէր դար։ Այդ պատճառով նա գրպանէն հանեց մի նոր լոյս տեսած նորավէպ՝ ու սկսեց ուշադիր հետաքրքրութեամբ կարդալ։

— Բեռնակիր և գիրք, նոյնպէս և ժամանակի այդպիսի տնտեսութիւն բեռնակիրի կողմէն, — գուցէ կըմտածէ ընթերցողը։

Սակայն, սիրելի ընթերցող, իմ խօսքը և ներկայ պատմութիւնն առ հասարակ կը վերաբերին այնպիսի ժամանակի, երբ ազգս մարդիկ բաղդի խորթ զաւակներին կընդունէին որպէս մարդ։ Այդքանն իմ կողմէն բաւական է, մնացեալը թող պատմէ ձեզ գրքիս վերնագրին ներքև գրած փակագծերի մէջի բառը !

II.

Անցան ժամեր։ Նրա բոլոր ընկերները զբաղում գտան ու հեռացան։ Հրապարակում մնաց մնայն «խենթը», այդպէս կանուանէին նրան նրա վճիռը լսողները եւ ծիծաղելով կը հեռանային նրա մօտէն։

Արդէն շատերն էին տեսել նրան այդ մակդիրը և այդ պատճառով էլ նա բաւական կարդացել էր, երբ նրան մօտեցաւ Պ. Լուսինեանը, որ այդ քաղաքում յայտնի էր իր պատկառելի հարստութեամբ եւ բացի այդ սերած էր մի հին, մեծանուն ազնուական տոհմէ։

— Բարեկամ, ասաց նրան Պ. Լուսինեանը, — կըտեսնեմ որ գործ չունիս. եկ ինձ հետ գիմացի ապակէվաճառի կըրպակը և մի շալակ տար մեր տունը։

— Ամենայն ուրախութեամբ, պատասխանեց բեռնակիրը, — սակայն որպէս վարձագին 20 դահեկան ստանալու պայմանաւ։

Պ. Լուսինեանը կատակ կարծելով այդ խօսքը, որովհետև շալակի համար որոշ սակագին (taxe) կար նշանակուած՝ «Ցա՛ր, ասաց, կտանաս»։

III.

Երբ գիւրաբեկ շիշերով լի արկղը շալակելով Պ. Լուսինեանի առաջնորդութեամբ հասան վերջնիս տունը և բակի դռնէն ներս մտան՝ բեռնակիրը նայեց, որ — ինչ տեսնէ՝ լաւ է — այդ բակը նման էր կատարեալ դրախտի։ — Դրախտ՝ շօշափելի, տեսանելի... և ոչ այն երևակայութեան ստեղծածը, որին տիրանալու համար անթիւ դարեր մարդիկ այնքան կուրծք ծեծել ու ծունկ են մաշել և որին, սակայն, դեռ ոչ ոք ոչ տեսել է, ոչ էլ համը նայել...

Բակի մի կողմը կբբարձրանար Պ. Լուսինեանի երեք-յարկանի ապարանքը, որի արտաքին շքայլ տեսքը միայն բաւական էր այդ չքնաղ շինութեան զմայլելի նեբքինը ցոյց տալու համար։

Մի ուրիշ կողմ աչքի կիյնար խիստ գեղեցիկ պարտիզակը, զարդարուած հազարմի տեսակ պտղատու եւ սիրուն ծառերով, թփերով, ծաղկոցներով...

Պարտիզակի կենդրոնումը — մի մեծակակ ջրաւազան, շինած մարմարիոնէ և բոլորակ հաճոյական կանաչով ու երփներանգ ծաղիկներով։ Իսկ մէջտեղումը՝ մի քանի արհեստական կղզեակներ կը շրջապատէին՝ բուն կենդրոնէն բարձրացող մարմարէ հինգ-ական ջրացայլը (фонтанъ), որ ախորժելի սուլումներով վեր-վեր կը խփէր զուլալ, բիւրեղանման ջուրը։ Բազմաթիւ ջրային թռչուններ կը լողային աւազանումը։ Գեղափետուր սիրամարգները իրենց ձագուկներով արքայի նման սիգալով կը ճեմէին կանաչագեղ մարգագետիններին վրայ։ Ընտելացրած սիրուն կենդանիներ պարտիզակի զանազան մասերում անհամաձակ կարածէին՝ ամեն մի անցող դարձողի վրայ երկչոտ հայեացքներ նետելով... Իսկ ծառերէն կախած մեսաղաշէն վանդակներում անուշիկ-անուշիկ կը զեղգեղէին բազմատեսակ երգող թռչունները։

Մէկ խօսքով այդտեղ ամեն բան վայելուչ էր, ամեն բան իւր տիրոջ ճաշակի

տէր, ու հիմակուան հասկացողութեամբ, երջանիկ լինելու հսկայ գրաւականը կարող էր կազմել. չէ՞ որ մեր անիծուած ժամանակներուն ընդունուած է կատերալապէս երջանիկ համարել այն արարածներին, որոնք նիւթական հարստութիւն ունին:.... Էլ ի՞նչ և ում հոգ, որ միևնոյն այդ արարածը բարոյական սնանկութեան գուռը բաղխէր:...

* * *

Այդ ամենը նկատեց թէ չէ՝ խեղճ բեռնակրի բերանը բաց մնաց:...

— Փա՛հ, փա՛հ, փա՛հ... Եթէ այդ բակի շքեղութեան մէկ–հազարերորդ մասին չափ շքեղ լինի և տիրոջ ներքին աշխարհը՝ շա՜տ լաւ... կը մտածէր նա:

Ցանկարծ... նա տեսաւ պարտիզակումը մի ուրիշ սրտագրաւ առարկայ, որը կը մոռացնէր ձեզ մնացեալ ամեն բան:...

Դա մի հրաշագեղ օրիորդ էր, որ թանկագին կերպասէ զգեստը խշխշացնելով եւ քղանցքներովը մաքուր աւազած ճեմելիքներն աւլելով կգբօսնէր այնտեղ: Նա մի ձեռքումը մի ոսկեզօծ գիրք բռնած՝ խոր

յափշտակութեամբ կը կարդար, իսկ միւսումը՝ մի նկարազարդ հովհար, որով կը զովացնէր իր այրուող, գեղատիպար դէմքը...

Կարդացածէն ստացած տպաւորութիւնները կոյսի դիմագծերին այնպիսի արտայայտութեան ձեւեր (mimique) կընծայէին, որ փոքր ինչ հմուտ հոգեբանը տեսնելով նրան՝ իսկոյն կասէր ձեզ նրա կարդացած գրքի բովանդակութիւնը...

Նա երբ տեսաւ բակի դռնէն ներս մտնող Պ. Լուսինեանին ու բեռնակրին՝ գիրքը ծալեց, մի քայլ առաւ դէպի եկողները և, նազելի իրանը անզգալապէս կորացնելով, շնորհալի ձեւով ողջունեց նրանց:

— Եթէ գիտենայի, մտածեց բեռնակիրը, — որ այդ բարեի մի մասը ինձ կը վերաբերի՝ ես յօժարութեամբ կը հրաժարէի սահմանելիք 20 դահեկանէս:...

Բայց ո՞վ կարող է քննել մարդոց սրտերն: Ինչ և իցէ:

Պ. Լուսինեանն էլ սիրով ողջունեց իր շնորհալի դստերը և առաջնորդեց բեռնակրին դէպի տան երկրորդ յարկը, որ կը բարձրանար մոզայիքի սանդուխով:

IV.

Էլ ինչ մաքեր ասէք՝ չիծնան զմայլած երիտասարդի ուղեղում։ Ինչ երազներ, ինչ երևակայութիւն... չկան մի բոպէ սլացը-նելու բեռնակրին մեր աշխարհէն դուրս — մի այլ, շատերիս անծանօթ աշխարհ...

Եւ նա սկսեց մտածել մօտաւորապէս հետևեալը, որ բաւական նման է Մայրենի լեզուի «Գիւղացին ու վարունգը» վերնագրով պատմուածքին։

Եթէ մի տարում այս պարոնի նման գտնէ 5,000 յաճախորդ ունենայի՝ այդ դէպքում ձեռք կը բերէի 100,000 դահեկան, որով ձեռնամուխ կը լինէի մի որոշ շրջանի թշուառների կեանքի բարօրութեան գործին՝ բարւոքելով նոցա բարոյանիւթական պայմանները (milieu)։...

Դրանով ապէր կը տայի անզգաներին համոզելու, որ այդ իմ պաշտած տարրն է մարդկային բնութեան «բաղդաւոր» դասակարգերի գոյութեան զօրեղագոյն նեցուկը!

Երախտահատոյց կը լինէի այն ազնիւ դասակարգին, որ կը կոչի ինտելլիկենցիա և որը կը հնչէ «խորթերին» «հարազատ» դարձնելու մթնոլորտում։ Ու որոնց շնորհիւ մինչև ինձ նման ողորմելի արարածներն ստացան ինքնագիտակցութեան հոգին ու նոցա անփոխարինելի երախտիքը միշտ ցմահ կը պարտաւորեցնէ գործել մեր բոլոր էութեամբ ի նպաստ խեղճերի։...

* * *

Այդպա մի բոպէ կը մտածէի իմ անձնականի մասին։ — Բաւականին կոկիկ կը հագուէի և մի տուն էլ կը գնէի՝ դէթ այս գաւթի տեսարանին ստուերն յիշեցնող։ Այնուհետև կը գայի և այդ նազելի օրիորդի ձեռքը կը խնդրեի... Նրա հայրը, Պ. Լուսիսեանը, կարծեմ չէր մերժեր. որովհետև ես էլ խօ սիրուն և դեռ 20–22 տարեկան աղամարդ եմ. նոյն իսկ — եթէ հաւատանք ինձ կազմակերպողների խօսքերին — «ազնիւ ու եռանդուն տղայ է» կասէին։

Մի սիրուն մանչ էլ շնորհէր մեզ Աստուած, որին կանուանէի Արտաշէս։... Ես

ու հրեշտականման տիկինս դէմ-դէմի կը նստէինք ջրացայտին մօտիկ. Արտաշէսն էլ քիչ հեռում իւր փայտէ ձին հեծած՝ վազվզէր մարդագետիններին վրայ ու իւր փայտէ սրովն ու հրացանովը զանազան զինախաղեր հնարէր։...

Այդ միջոցին գիրկս բանայի, բազուկներս պարզէի և իմ թանգագին Արտաշիկիս կանչէի. «Արտաշ, հոգեակ, եկ պաչեմ թշերդ... գէ՛լ, գէ՛լ, գէ՛լ։...

V.

Այդ ամենը լաւ։ Բայց վերջին խօսքերն՝ համարես լսելի ձայնով արտասանելիս մեր խելօք բեռնակիրն այնքան յափշտակուած էր իւր երևակայութեամբ, այնպիսի ինքնամոռացութեան մէջ էր, որ կարծելով, թէ արդէն ամեն ինչ եղած-վերջացած՝ երևակայածն իրականացած և, իրօք, մանկիկն իւր դէմն էր, — պարզեց թեւերը և կը պատրաստուէր գրկելու Արտաշէսին։...

Մինչդեռ այդ շարժումներն անելիս նա

ձեռքէն բաց էր թողած շալակի չուանը, որով շիշերի արկղը սանդուխէն վար գլորելով՝ թէ՛ մէջինները ջարդ ու փշուր եղան և թէ ընդհարելով նրա ետևէն բարձրացող Պ. Լուսինեանին՝ նրան ևս գլորեց ցած։ Խայտառակութիւնը կատարեալ էր արդէն։... Այնու ամենայնիւ մեր բեռնակիրը՝ դեռ ևս պաշարուած միաքն զբաղեցնող ցնորքներով՝ հպարտ-հպարտ վեր բարձրացաւ, ու այն ինչ կը պատրաստուէր նախասենեակէն ընդունարան մտնել, երբ աղախինն զգուշացրեց նրան։

— Մի յանդգնիր, պարոն, շալակդ ու պարոնին վա՛ր գլորելէ յետոյ դեռ ներս էլ մտնելու!

Հազիւ հազ բեռնակիրն սթափուեցաւ մի քիչիկ, բայց տեսնելով անողոք իրականութիւնը՝ հակառակ իր երևակայածին՝ ապշեցաւ մնաց և չէր կարող ինքնիրեն հաշիւ տալ անցած-դարձածի մասին։

Լո՛ւռ, ապո՛ւշ կանգնած նախասենեակի դռան առջև՝ կը մտածէր խեղճը...

VI.

Մինչ այս, մինչ այն՝ բաղդի բերմամբ անվնաս մնացած Պ. Լուսինեանը սանդուխէն վեր բարձրանալով՝ սաստեց աղախնին, որ հեռանայ։ Ապա դառնալով բեռնակրին՝ ասաց մեղմօրէն.

— Բարեկամ, մաքր սենեակ և մի քիչ հանգստացիր։

Բեռնակիրը խօսք չ'գտաւ ասելու և լռիկ-ճնչիկ հետևեց նրան, որ առաջնորդեց մի փոքրիկ սենեակ, ուր բեռնակիրը երազումն էլ չ'տեսած արգուղարդ և շռայլ կահաւորանք տեսաւ։ Տանտէրը մի թիկնաթոռ ցոյց տուաւ և խնդրեց բեռնակրին նըստել։ Վերջինս մեքենայաբար ինկաւ թիկնաթոռին մէջ և գլուխն առջևը կախած՝ չէր համարձակեր տանտիրոջը նայելու։ Մինչդեռ տանտէրը բոլորովին խաղաղ տրամադրութեամբ դարձաւ նրան այս խօսքերով.

— Մի քաշուիր, բեռնակիր եղբայր, եւ համարձակ պատասխանիր ինձ. միայն

պատասխաններդ լինին կարճ, որպէս զի գործէդ չ'ուշանաս։ Ապա ասա ինձ, ի՞նչ էր մի մէճիտիյէ վարձադին ուզելուդ պատճառը։

Բեռնակիրը տեղնիտեղով պատմեց՝ ընթերցողին ծանօթ վճռի մասին (գլ. I)։

VII.

3104-48

Պ. Լուսինեանը լսելով բեռնակրի այդ տարօրինակ վճիռը՝ ժպտաց և ասաց.

— Նախ խմացիր, բարեկամս, որ վրդովմունքի ոչ մի առիթ չունիմ. ապա՝ միայն հետաքրքրութիւնս յագեցնելու համար կը խնդրեմ, որ պատմես ինձ՝ ի՞նչու անըզգոյշ գտնուեցար, որ շալակդ բաց թողիր։

— Նախ քան ձեր հետաքրքրութեան յագուրդ տալս մի խնդիր կառաջարկեմ։

— Ի՞նչ կուզես։

— Կը խոստանա՞ք լսել ինձ։

— Ամենայն ուրախութեամբ։

— Եւ պիտի կատարէ՞ք իմ միակ խնդիրքս։

ZUUՌ Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

— Պիտի կատարեմ, եթէ անկարելի բան չէ։

— Երբէք անկարելի չէ և ոչ էլ անբնական, եթէ չ'հաշուենք մինչև այժմ ընդունուած ամենատգեղ սովորութիւններէ մին։...

— Ինչ ասել կուզես այդ խօսքերով։

— Խօսքս այն սովորութեան մասին է, որ... դեղձի շառաւիղը շագանակենու հետ չեն պատաստեր, կարծելով թէ եւ այս, եւ միւսը անպտուղ պիտի մնայ, եթէ յանկարծ այդ երկու դրացիներին մէկտեղեն...

Պ. Ղուսինեանը հասկացաւ, որ բեռնակիրի վերջի խօսքերի մէջ մի սրամիտ այլաբանութիւն կար, բայց թէ դրանով ինչ ասել կուզէր նա՝ չ'կարողացաւ գլխի իյնալ։

— Եղբայր, ասուց նա մեղմիկ, — [illegible] բեռնակիր լինել [illegible] մարդ չես... քո [illegible]համաբանական խօսակցութիւնը քեզ դիր[illegible]ասկածելի կը դարձնէ քո խօսակցի [illegible] բայց, խնդրեմ պարզ խօսեցէք, [illegible]ամ ձեր միտքը։

— [illegible] կը տաք ինձ յուսալ, վերջապէս, [illegible] զուք մերժելու չէք ինձ, եթէ պատմեմ ձեզ շիշերը կոտրելուս հետաքրքիր շարժառիթը, որ մի ժամ առաջ իմ իտէալն էր։...

— Սիրելի եղբայր, ձեր իւրաքանչիւր խօսքը մի առանձին հետաքրքրութիւն կը պարունակէ իր մէջ և այդ ամենէն յետոյ կը դժուարանամ մի դրական պատասխան տալ ձեզ, քանի դեռ լուծած չէք բուն հանելուկը։...

Բանն այնտեղ հասաւ, որ բեռնակիրը, նախ քան պատմելը, խօսք առաւ հայ Կրեսոսէն, որ պիտի կատարէր իր ցանկութիւնը։ Այնուհետև նա պատմեց մի առ մի այն ամենը, ինչ որ մենք ներկայացրինք մեր ընթերցողներին (գլ. IV.)։

Պատմութիւնը վերջացնելէ յետոյ նա մի հարցական հայեացք ձգեց Պ. Ղուսինեանին վրայ, որը այդ արտաքին պատմութիւնը լսելով — արդիւնք երիտասարդական դիւրաւառ երևակայութեան՝ — բնազդի մի մղում զգաց իւր ներսը դին, մօտիկնալ, մտերմանալ այդ հետաքրքիր երիտասարդին..

Եւ նա անձնատուր եղաւ մի ան[illegible]նալի մտատանջութեան։

Բեռնակիրն էլ՝ համարեա [illegible]ցութեան մէջ մի քիչ մտածելէ [illegible] թրկնաթոռին վրայ քուն եղաւ։

VIII.

Պ. Լուսինեանը կէս–քուն կէս–զարթուն այդ դրութեան մէջ մի զարմանալի երազ տեսաւ։

Որպէս թէ իր աղջկայ հետ ներկայ էին մի խառն ժողովի որ տեղի կունենար Համազգային ժողովարանի դահլիճում։ Այդտեղ զանազան ազգութեան պատկանող բազմաթիւ երիտասարդներ, առանց սեռի և դասակարգի խտրութեան, տաք վիճաբանութիւնների մէջ էին։ Գաղափարական ընդհարումների ժամանակ խանդն ու աւիւնը մարմնացած էին վիճողների մէջ։

Պ. և Օր. Լուսինեանները մօտեցան դահլիճի կենտրոնում դրած մեծ–սեղանը շրջապատող խմբին, ուր կրակոտ երիտասարդները կը վիճէին հարուստ և հասարակ դասակարգերի մէջ աչքի զարնող դասակարգային անհամաձայնութիւնների — զանազան խտրութիւնների, յարաբերութեան անջրպետների և, միով բանիւ, նրանց մէջ տիրող հակառակութիւնների — վերացման և մերձեցման տեղի տալու վրայ։

Վիճողները նպատակ էին ընտրել խմանալ, թէ ինչ միջոցով կարելի էր յիշեալ երկու դասակարգերի մէջէն արմատախիլ անել փոխադարձ ատելութիւնները, տեղի տալով Պուրժուազիայի և ամբոխի մերձեցման։ Որով ապագայում հնարաւոր պիտի լինէր ի մի ձուլել (assimiliation) այդ դասակարգերին։ . . .

IX.

Յարգելի Պարոններ և Օրիորդներ, կասէր մեր յիշած ժողովականներէ մին՝ Շաւարշը, — զարմանալի երևոյթներէ մին էլ, ի միջի այլոց, այս է, որ այդ անհեռատես — ինքնամոլ պարոնները (խօսքս Պուրժուազիայի մասին է), առանց աչքի առջև ունենալու իրենց ընտանեկան կեանքի այլանդակ դէմքը, — դեռ կը կարծեն, թէ ամբոխի արենակցութիւնն իրենց հետ կարող է անրաղդութիւնների դուռ բանալ իրենց առջև։...

Հետաքրքիր է խմանալ՝ ինչ կասեն դոքա այն դէպքերին, երբ մեր յիշած երկու

տարբեր դասակարգերի երկու սեռի երիտասարդաց մէջ կը գոյանայ սիրոյ հաւասարակշռութիւն։...

— Ինչ կասեն, պատասխանեց Սուրէնը, — այս, թէ սիրաբանական քաղաքականութիւնը կը զօրէ ստեղծել այնպիսի պայմաններ, որպիսիքն են սիրոյ բոպէական ազդեցութիւնը, լոկ կրքերի արդիւնք խաբուսիկ յոյսերը...., որոնք առժամապէս մոռացնել կը տան մարդուս անցեալը, ներկայ միջավայրը և գալիքը... Սակայն առանց ժամանակ տալու, որ մի քանի բոպէ սրա կամ նրա զաւակը — ենթական լրջօրէն մտածէ իւր առնելիք քայլին վրայ, երևակայէ այդ քայլի հետևանքները մանրամասնաբար։... Վերջապէս՝ սիրաբանական քաղաքականութիւնը կը հեռացնէ ենթակայի մէջէն սառն դատողութիւնը, քրիթիքական հայեացքները և կը շինէ նրանց զժբաղդ զոհեր բոպէական ազդեցութեան, — զոհեր՝ արժանիք ամբաղդանալու։...

Սուրէնը մի ամիրայի որդի էր, որի համոզմունքով բարձր և հասարակ դասակարգերի երկսեռ երիտասարդութեան արենակցութեան միակ շարժառիթը բոպէական ազդեցութիւնն է, ինչպէս ինքը բացատրեց բաւական համոզեցուցիչ տոնով։

Սրա խօսքերը մեծ ազմուկ ձգեցին ժողովականներին մէջ, որը տևեց ամբողջ ժամեր։ Ի վերջոյ Պ. Լուսինեանի կողքին նստած մի օրիորդ ոտքի ելաւ և գոչեց.

— Հրաշալի տրամաբանութիւն է Պ. Սուրէնի արածը, բայց յարգելի պարոնը կը մոռանայ, որ մենք, բարեբաղդաբար, կապրինք մի այնպիսի դարում, երբ ծնողները կը պարտաւորուին իրենց զաւակացը այնպիսի դաստիարակութիւն տալ, որ գրանք չափահաս դառնալիս չի լինին բանջարանոցի խրատիչակ... այլ ընդունակ դառնան դատել ամեն ինչ սառնութիւնով, քրիթիքայի ենթարկել ամեն մի երևոյթ, հեռատեսութեամբ գուշակել ամեն մի երևոյթի արդասիքը, այս կամ այն քայլի հետևանքներն ի նկատի առնել կէտ առ կէտ են են...

Անցան անհետ այն տնաւէր յետապիմական դարերը, երբ հասկացողները (ոչ—խրատիչակները) շատ—շատ 5 % կը կազմէին։ Այժմ, ընդհակառակն, խրատիչակները 5 % պիտի կազմեն։... Եւ խրատիչակների թուի այդ հսկայ սահմանափակումը պատահականութեան արդիւնք չ'պէտք է համարել, ոչ երբէք!

Դա արդիւնք է մարդկային յառաջխաղաց մտքի անյողդողդ բարգաւաճման։ Դարերի

ընթացքում մարդկային ուղեղը՝ անսովոր կոիւ մղելով ագիտութեան, կոպտութեան դէմ՝ իւր հսկայ նուաճումներով հարկադրեց մարդկութեանը — ճանչնալ ժամանակից դարի հոգին և համակերպիլ նրա անդառնալի պահանջներին։ Որի շնորհիւ էլ, ահա, խրատիչների թիւը գնալով պակասեցաւ, մինչև յիշածս աստիճանը։... Այդպէս կը պահանջէ մեզ ժամանակից մարդկութիւնէն մեր դարի հոգին, ով չիհասկանայ այդ — նա իրաւունք չունի ապրելու որպէս մարդ, որովհետև աշխարհակալ — հասկացողների անպարտելի բանակի դրօշին վրայ գրած է «Ով ժամանակի հետ յառաջ չիգնայ, նա խրատիչակ կը մնայ և ով խրատիչակ է՝ նա մեր դարի մարդը չէ!»։ Մի էլ կարծէք, թէ ես հեռացայ նպատակէս, ամենևին ոչ. ես կուզեմ խնդիրը քննել իր հիմքէն։...

Մենք ունենք, բարերազդաբար, այնպիսի սեպհական և օտար հիմնարկութիւններ, որտեղ հնարաւորութիւն կը տրուի նիւթական միջոցները զուրկ եղողներին, որ սոքա կողք-կողքի նստին և նպատակայարմար դաստիարակութիւն ստանան «կարող» դասակարգի զաւակաց հետ միասին։... Կողմնակի օժանդակութիւնները և բարեմիտ խրատիչների նիւթական զոհողութիւնները — եթէ հասկացողների կենդանի խօսքն ու ազդու գրիչը այդպիսի բարեմիտների թիւն աւելացնելու համար ի գործ դրին, — կը վերացնեն մնացեալ դժուարութիւնները...

Ասացէք խնդրեմ, շարունակեց նա, ազնիւ Պարոններ և Օրիորդներ! Երբոր տարբեր դասակարգերի զաւակները դաստիարակութեան միևնոյն մակարդով հունձելու հնարաւորութիւն ունին՝ չէ՞ որ խրատիչակները բացառիկ տիպեր են, կամ այլապէս ասած, ժամանակի պահանջներին անտարբերութեամբ վերաբերուող ծաղրելի միմոսներ։... Տէրը այդպիսիների հե՞տ... Երբ նոքա չեն ցանկայ հպատակիլ ժամանակի ամենակարող իշխանութեանը՝ նոքա յանցաւորներ են, և մենք նրանց թոյլ չենք տայ, որ խանգարեն հասկացողներին։... Մինչև որ՝ մի օր զգան, վերջապէս, իրենց սրխալը և յօժարակամ գան — մանին մեր վեհապանծ դրօշին ներքև։...

Մէկ խօսքով — չ'պէտք է խրատիչակ լինել! որովհետև խրատիչակների համար միջավայրը կլանող է և անկուշտ։...

Իսկ եթէ երբէք գոյութիւն ունին մեզանում այնպիսի պայմաններ, որոնք խրատի-

լակներ արտադրելու դիրք ունին, պէտք է այսպէս թէ այնպէս ոչնչացնել դրանց! Այդպիսով միայն կարելի կը լինի Նոր Սերունդն այլանդակող կամ խրտիլակ արտադրող սոսկալի չարիքի առաջն առնել։...

Եղբայրացութիւն!

— Բոլշեական ազդեցութեան զոհերը այդպիսի խրտիլակներ են սուար մեծամասնութեամբ և մենք իրաւունք չունինք նրանց յանցանքը խալաթի պէս բերել-փաթաթելու մարդկութեան վրայ, այդ աններելի բարբարոսութիւն կը լինէր մեր կողմից։...

Ահա ամենը, ինչ որ ես կարող էի ասել մերձեցման խնդրի մասին. իսկ քիչ առաջ յիշածս յեղաշրջման միջոցներին վերայ կը խօսինք դեռ ուրիշ անգամներ։

Լուեց օրիորդը և նստաւ դարձեալ Պ. Լուսինեանի կողքին։

X.

— Սակայն չ'պէտք է մոռանալ, նկատեց յաղթահարած Սուրէնը, — որ ձեր խօսքերը կը վերաբերին մի այնպիսի կընճռոտ հարցի, որպիսին է Պուրժուազիայի և ամբոխի մերձեցումը, որը — եթէ ոչ անիրագործելի նպատակ — գէթ երկար, շատ երկար միջոցի կարօտ մի խնդիր է։

— Եւ սակայն այնու ամենայնիւ, ասաց օրիորդը, — որի լուծումը մի հսկայ գրաւակն կը լինի Համայնականների սկզբունքի յաղթանակին։

— Ներեցէք, Պ. Սուրէն, մէջ մտաւ Շաւարշը, — չ'պէտք է անպայման խուսափել այդ հարցէն և անհասկացողներին էլ առիթ տալ կարծելու, թէ դեռ վաղ է Մերձեցման խնդիր յարուցանելը, ոչ! Բացի այդ, իմ կարծիքով, դա այնքան էլ կնճռոտ խնդիր չէ, որքան դուք կը կարծէք, և դրան կարելի է հեռամուտ լինել հէնց այժմեանէ։ Պէտք է նախապէս պուրժուազիայի առջև հերքել նոցա հեռևեալ

յիմար, անհիմն կարծիքը, թէ ամբոխի հետ արենակցութիւն ունենալ — գիտակցաբար անբաղդանալ կը նշանակէ։ Պէտք է օրինակ բերել այն բազմաթիւ դէպքերը, որոնք նոցա կարծիքի հակառակն են ցոյց տուել, նաւ բացառութեամբ։ Պէտք է այս թէ այն կերպ վերահասու անել տալ ամբոխի բարոյական բարձրութեանը, սրա ընտանեկան կեանքի համեմատաբար աւելի մաքրավարի լինելուն և համերաշխ, գիտակցական, սրտէ բղխած սիրոյ ազդեցութեանը դասակարգային խարութեանց վրայ են են... Այս նախնական՝ բայց և անհրաժեշտ ու նպաստաւոր քայլերն առնելէ յետոյ շատ բան չմնաց՝ ապացուցանելու համար, թէ նիւթական պայմանները այնքան խոշոր խոչընդոտներ չեն մերձեցման խնդրում, որքան կը կարծուի։...

«Չափաւոր ատիճանաւորում — ահա այն ամենազօրեղ միջոցը, որով կարելի կը լինի նիւթական պայմաններում անհամաձայնութիւնները կապը, զգալի չափով, թուլացնել և տեղի տալ բարոյականին։... Իսկ չափաւոր ատիճանաւորում ասելով պէտք է հասկանալ՝ առաջին գ սակարգի (բարձր) կողմէն նիւթական–օժանդակիչ զի-

ջոդրիւնները և երկրորդի կողմէն՝ ձգտումն դէպի բաւականաչափ համակերպումը։... Չ՝մոռանամ յիշել, որ այդ պարագային պիտի չքանան շահադիտական բժախնդրութիւնները, ըստ որում առաջնի նիւթական զոհողութեանց ի տրիտուր պիտի ստացուի՝ ազգային անջատ խաւերը միացնող, սերտ կապերով միմեանց հետ շաղկապող յօդերը, որոնք խիստ մեծ նշակութիւն ունին մի ազգի գոյութեան պահպանման խնդրում։...

Ահա և միաժամանակ այդ խնդրի — Մերձեցման — դէմ կանգնող ամենամեծ խոչնդոտը — չափաւոր ատիճանաւորումը։...

XI.

Շաւարշն այնպիսի ոգեորութեամբ ու ջերմ հաւատով կարտասանէր այդ խօսքերը, որ կարծես իր կախաղանի դատավճիռը պատեղու կը ջանար։ Նա՝ զգալով հանդերձ իր արծարծած մտքերի ծանրակշռութիւնը՝ կուզէր հաւատացնել ունկնդիրներին թէ,

անտարակոյս, գլուխ գալիք գործ էր այդ և թէ այդ խնդրի լուծումով ազգային կեանքը յառաջադիմական թռիչքներ գործած կը լինէր։

— Ամբոխի արտադրած յուսատու սերունդը, աւելացուց նա, — ամբոխի ինդելիկենցիան, թափանցելով կրեսոսների զգայական աշխարհը, մուտ գործելով նոցա կռատունները՝ վերադարձնելու է մարդկութեանը հրաշագործութեան դարը, երբ իւրաքանչիւր յայտնագործող — յայտնութեան արդիւնք եղող — հրաշքի հեղինակի գլխին գափնիներ պիտի տեղան զգայուն մարդիկ և որոտնդոստ ձայնով պիտի գոչեն. «Կեցցէ՛ հրաշագործ սերունդը, կեցցե՛ն եւ նպաստի աղբիւրները»։ Եւ «աղբիւրները» — արդի կրեսոսների սերունդը — ոգևորուած իրենց հասցէին ուղղուած խօսքերով՝ պիտի հասկանան, թէ ինչ կը կամենար արդի երիտասարդութիւնը, թէ ինչ արդիւնք ունեցաւ մեր պահանջած մերձեցումը, թէ՝ հակառակ իրենց նախկին կարծիքի՝ որքա՜ն մեծ ու յեղաշրջող ազդեցութիւն ունեցաւ «արհամարհած դասակարգի արտադրութիւնը» իրենց զատապարտելի բարոյական ծանրաչափին (Caromètre) վերայ... թէ ինչպէս գիտակցաբար անբաղդանալու փոխարէն՝ ճակատագրական անողոք հարուածների շնորհիւ անբաղդացած (բայց յուէտ կարեկցութեան արժանի) մի դասակարգ գիտակցաբար բաղդաւորուեց եւ բարոյապէս բաղդաւորացրեց իրեն, պուրժուազիային էլ... թէ, վերջապէս, ինչպէս արդարացան մեր տուած բոլոր յոյսերը, որոնց անդադար պտուղը կը վայելէ բովանդակ Ազգը։...

XII.

Այնուհետև շատ թեր և դէմ կարծիք յայտնողներ եղան թէև, սակայն ժողովականների ստուար մեծամասնութիւնը նպաստակայարմար սեպեց Շաւարշի — այդ մարմնացած ոգևորութեան — արծարծած մտքերը և վճռեցին սիրտ սրտի ու ձեռք ձեռքի տուած՝ յառաջ մղել մերձեցման գաղափարը ժողովրդի զանազան խաւերում։

Պ. Լուսինեանը զմայլմամբ կը լսէր ու կը դիտէր նրանց։ Նա իւր մտքով սլացել

էր հեռուն–հեռուն իր «ՀՐՔԱՆԱԿԷՆ», ուր մարդիկ վաղուան վրայ կը մտածեն և ս. Գաղափարը աստուածացնել գիտեն։...

Նա չ'կարողացաւ զսպել իր գագաթնակէտին հասած զարմանքն այն պահուն աւելի, երբ տեսաւ, որ իր աղջիկն էլ մի ա-ռանձին ոգեորութեամբ մօտեցաւ Շաւարշին և ասաց։

— Կը գովեմ ձեր եռանդն, ազնիւ պարոն, ապա գիմելով ամբողջ ժողովակա-ներին, — որպէս և ձեր ամենքի, յարգելի Պարոններ և Օրիորդներ։... Կը ցանկամ ձեզ քաջալերութիւն ու յաջողութիւն և կը խնդրեմ խոնարհաբար, որ եթէ կարելի է, բարեհաճիք ընդունել իմ համեստ աջակցութիւնն այդ սուրբ գործում։... Թող նախախնամութիւնը զօրավիգ լինի մեզ և թեթեւցնէ այն ծանրութիւնը, որ կիյնայ ձեր վրայ ներկայ ասպարիզում! Թող նա վերացնէ բոլոր խոչընդոտները, որոնք կարող են հանդիպել ձեզ և կասեցնել ձեր յառաջխաղացութիւնը! Թող մեզնէ իւրաքանչիւրն զգայ իւր վրայ դրած սրբազան պարտականութիւնը և ջանայ բարեխղճօրէն կատարել. որով և պիտի ազատուինք գալիք սերունդների թուք ու մուրճն և պիտի արժանանք սոցա օրհնութիւններին։...

Ժողովականները սիրով և ուրախութեամբ ընդունեցին օր. Լուսինեանի խնդիրքը և նրան նշանակեցին իրենց խմբերին մէջ, որպէս համակրող–անդամուհի։ Ժամանակի ընթացքում, երբ նա գրական գործունէութիւն ցոյց կուտար, կարող էր ընտրուել և «Մերձեցման Վարչութեան» անդամ։

Պ. Լուսինեանը ոտքի ելաւ և հրապարակաւ իւր խնդակցութիւնն յայտնեց, միաժամանակ ինքն էլ հետեւելով իր աղջկայ օրինակին։

XIII.

Պ. Լուսինեանը գիտէր, որ ինքն ուշ էր հասել ժողովին. որ իր գալէն առաջ շատ վիճաբանութիւններ եղել ու շատ կարծիքներ, գաղափարներ փոխանակուել էին մերձեցման խնդրի առթիւ։ Բացի այդ նա համոզուած էր, որ այդ խնդրի մասին որոշ, ամիսոք գաղափար կազմելու համար պէտ երկար պէտք էր ասել, լսել, գրել, վիճել։...

— Սակայն այնու ամենայնիւ, կը մտածէր նա, հասկանալու ընդունակ մարդը այլքանէ՛ն էլ կարող էր վերոյիշեալ հարցի մասին, գէթ հարեւանցի, գաղափար կազմել և ըմբռնել նրա վեհութիւնն ու կարեւորութիւնը։ . . .

XIV.

— Զարմանալի՜ երազ... բացականչեց նա՝ կիսաքուն զրութենէն սթափուելով և ներքին աշխարհումը մի գերզգայական յեղափոխութիւն զգալով։

— Բայց ոչ միայն զարմանալի երազ, այլ և....

Նա խօսք չ՚գտաւ արտայայտելու համար՝ երազի, ժողովի և «Մերձեցման» խնդրի իր վրայ թողած տպաւորութիւնները։

Այդ մի առանձին հաճոյքով նայեց այդ ամենի նախապատճառ բեռնակրին, որը թիկնաթոռին մէջ հանգիստ քուն կը լինէր և — ո՞վ գիտէ — ի՞նչ երազ կը տեսնէր։ Նայեց նրան, բայց չ՚զարթեցրեց. մտիկ

սենեակէն մի թեթև վերմակ բերաւ և ծածկեց նրա վրայ «Թող հանգստանայ բարեկամս» մրմնջելով։

Այդ ինքն էլ փուեցաւ բազմոցին մէջ և սկսեց մտածել երազին վրայ։...

Բայց եկեղեցական հնչակի սթափեցնող զնգնգոցը երկար չ՚թողեց նրան այդ մտատանջութեան մէջ և յիշեցրեց, որ ճաշի ժամանակ է։ Ուստի ծնողական խանդաղատանքով մօտեցաւ բեռնակրին, զարթեցուց նրան ու ճաշի հրաւիրեց։

XV.

Սեղանատանը՝ տիկին և օրիորդ Լուսինեանների ու բեռնակրին հետ միատեղ ճաշելէն յետոյ երբ նկատեց Պ. Լուսինեանը, որ ինքն ու բեռնակիրը միայնակ մնացին, ասաց վենջինիս.

— Սիրելի փեսացուս! Նախախնամութիւնն, երեւի, այնպէս էր տնօրինած, որ մի զարմանալի երազի ուրախաւիթ տպաւորութեան տակ ես զիջանիմ իմ ամենա-

սիրելի և միակ գոտերս ձեռքը ձեզ նման մի համակրելի պարոնի։... Ես ձեզ փեսացու կանչեմ այն պատճառով, որ բոլոր սրտովս այսպէս ցանկալ ստիպեց ինձ՝ այժմ ձեզ պատմելիք երազս. մի երազ, որ բոլորովին ինքնաներշնչման դեր խաղաց իմ մէջ։... Կրճայ աղջկաս էլ համաձայնութիւնն ստանալ և յուսով եմ, որ նա կը համակրի ձեզ, որովհետև... (նա տատանուեց և խօսքը թողուց անկատար)։ Այնուհետև գուք կը հասնիք ձեր մուրազին։

Պ. Լուսինեանը կէս առ կէս պատմեց նըրան իր երազը, որմէ յետոյ.

— Ես անհունապէս շնորհակալ եմ ձեզմէ — պատասխանեց բեռնակիրը ցընծութեամբ — և բաղդոյս երջանիկ, որ վերջապէս հնարաւորութիւն ունեցայ ձեզ նման մի նշանաւոր ազնուականի բերնէն լսելով մի այդպիսի գիջողութեան խօսք։ Այսուհետև թէկուզ ձեր համեստափայլ օրիորդը չի համաձայնի կենակցել ինձ հետ, — այդ հոգ չէ։ Անհատական ազատութիւնն յարգելու սրբազան սկզբունքը մեզ կզգուշացնէ այլոց կամքին վրայ մազաչափ ծանրանալէ։ Հետևաբար ազնիւ օրիորդը ազատ է ընտրել իր սրտի սիրելին։ Այդ

պէսքում ես մեծ հաճութեամբ կամուսնանամ ուղղակի — թող ներսի ինձ այսպէս ասել — ձեր խօսքերին հետ և յաւերժ երջանիկ կզգամ ինձ։ Կարծեմ, կը հասկանաք գուք իմ այդ խօսքերի միտքը, կը հասկանաք, թէ ինչ կը նշանակէ խօսքերի հետ ամուսնանալ։... Հաւատացէք, մեծարգոյ պարոն, որ այլոց խսկական բաղդաւոր ամուսնութիւնէն աւելի մեծ ուրախութիւն պատճառեց իմ սրտին այն նշանաւոր երևոյթը, որ ինձ հրճուանքով վերահասու անել տուաւ Մերձեցումի կարելիութեանը։... Այսուհետև բաղդաւո՛ր եմ ես, համոզուած լինելով, որ մի օր — տայ Աստուած հեռուն չլինի այդ ՕՐ–ը — բաղդ պիտի ունենանք Հայ ազգի երկու և աւելի աչքի ընկնող դասակարգերը եղբայրական Ս. Դրօշին ներքև միացած տեսնելու։... Հայութեան յառաջիկայի մայլ հորիզոնը հետզհետէ կը պարզուի և ես մտաւոր աչքերովս կը տեսնեմ արդէն, թէ ինչպէս կը ցոլան փրկաւէտ շառայլները՝ ոսկեզօծելով Հայ ժողովրդի բարոյական եթերը։...

Եւ, իրօք, բեռնակիրն անկեղծօրէն ուրախացած սրտումը, որ հանգամանքներն այդպէս գեղեցիկ պայմաններ ստեղծեցին

իրենց մէջ, որոնց շնորհիւ կը բացուէր գործունէութեան մի նոր, նպատակայարմար ասպարէզ նրա նման գործելու խնդ ու պատրաստակամութիւն ունեցողին առջև,— ցտեսութիւն ասաց Պ. Լուսինեանին եւ մեկնեց նրա տնէն:

Օրիորդի կամքն իմանալու գործը Պ. Լուսինեանն իր վրայ առաւ:

Վերջինս խնդրեց բեռնակրէն, որ մի շաբաթ յետոյ գայ և լսէ օրիորդի գրական կամ բացասական պատասխանը:

XVI.

Երազը շատ խոր տպաւորութիւն գործեց և աղնիւ օրիորդին վրայ. այնպէս որ՝ երբ Պ. Լուսինեանը պատմեց երազը վերջացուց.

— Հայրիկ, ասաց օրիորդը, — Թող որ ես շատ հեռուն եմ՝ սոսկ մի երազի ազդեցութեանը ենթարկուելու և նրան մեծ նշանակութիւն տալու մաքէն, այնու ամենայնիւ քո երազի ներքինը (fond) գիտեց

ինձ:... Եթէ, իրօք, ես ներկայ լինէի այդ Ժողովին՝ անտարակոյս կը բացականչէի. «... Ոչ միայն կառաջարկեմ իմ յօժարակամ աջակցութիւնը ձեր սկսած վեհ գործին, այլև պատրաստ եմ ծաղիկ կեանքս անգամ զոհ բերելու՝ ազգի անջատ խաւերը միմեանց հետ շաղկապող գործի սեղանին վրայ! — Ուրեմն, սիրելի աղջիկս, գոչեց Պ. Լուսինեանը՝ յաղթական ժպիտն երեսին, — եթէ դու զէմ չես Մերձեցման գաղափարին և, հետևաբար, նպատակայարմար կը սեպես երկու դասակարգերի արենակցութիւնը, որը մի ուշագրաւ մասը կը կազմէ Մերձեցման խնդրի, — քեզ տեսնեմ, որ սրտով զգացած և լեզուով արտայայտած գործնականապէս ցոյց տաս:... Դրանով առաջին և կենդանի օրինակ կը հանդիսանաս քեզպէսներին առջև:

— Պատրաստ եմ, գոչեց օրիորդը, ընդունելու առաջարկութիւնդ:

Այն ատեն պատմեց հայրը բեռնակրի մասին մեր գիտեցած ամենը: Նա նոյնպէս յայտնեց, որ մի շաբաթ յետոյ փեսացուն գալու էր լսելու օրիորդի վերջնական որոշումը:

Օրիորդը լսելով հօրը վերջին խօսքերը՝ դրականապէս խօսք տուաւ, որ եթէ ժամանակի ընթացքում տեղի ունենալիք յարաբերութիւնները կապացուցեն բեռնակիր պարոնի համակրելիութիւնը, այն դէպքում, առանց երկար-բարակ տատանումների, առանց նկատելու դասակարգային խարութիւնները և ընդունելով «չափաւոր աստիճանաւորումի» սկզբունքը, — պիտի կատարէր իր խոստումը:

Միւս կողմէն բեռնակիրն էլ, երբ Պ. Լուսինեանէն իմացաւ օրիորդի որոշումը, շատ գովեց նրա այդ վարմունքը: Որ նա — օրիորդը — սկզբունքով համակրելով հանդերձ Մերձեցման գաղափարին՝ կուրօրէն չէր համակերպած հօրը կամքին, առանց իրենց (օրիորդի և երիտասարդի) մէջ տեսնելու՝ որպէս անհրաժեշտ պայման՝ սիրոյ հաւասարակշռութիւն և դրան նպաստող այլ երևոյթներ:

— Ձպէտք է խրատիչակ լինել, ասաց բեռնակիրը՝ երազի հերոսուհու այդ խոսքերն յիշելով, — և հեռու մնալ տրամաբանական քայլառութենէ... ոչ! Պէտք է դէպի Գաղափարը լինել սատարիկ ջերմ, որպէս լափիչ կրակ. իսկ գործնական ասպարիզում՝ դէպ ի առնելիք քայլերը — սառնարիւն քրիթիքոս, թէև հաստատամիտ:... Որովհետև տաքարիւնութիւնը երիտասարդութեան ամենամեծ թշնամին է և բացի այդ, ինչպէս կասէ տաճկի առածը՝ «Սօնքի փիշմանի — պաշա տիշմանի», այսինքն բանն անելէ յետոյ զղջալը օգուտ չի բերեր:

XVII.

Անցան շաբաթներ և ամիսներ: Մեր բեռնակիրը իր տան նման կերթար — կը գար Պ. Լուսինեանի տունը: Նա անարգել մուտ կը գործէր Լուսինեանի ընտանիքին մէջ, մտերմաբար և համարձակ կը տեսնուէր նրանց հետ և իր օրինակելի վարք ու բարքով ամենքի անկեղծ համակրութիւնը կը վայելէր:

Նախկին օրերում, իրաւ է, Լուսինեան ընտանիքին շատ տարօրինակ, նոյն իսկ իրենց գիրքին անպատաւաբեր կերևէր այդ բանը, որ հասարակ մահկանացուն մուտք կը գործէր իրենց մէջ, որպէս հաւասար

մարդ։... Սակայն կարճ ժամանակի ընթացքում համոզուեցաւ այն ընտանիքը, որ ամբոխի մէջ կան երիտասարդներ, որոնք իրենց ստացած նպատակայարմար դաստիարակութեան շնորհիւ ունին քաղաքացիական մարդավարի նիստ ու կաց. նիւթական աղքատութեան առընթերակից՝ բարոյական հարստութիւն, երախտագիտական զգացմունքներ, «գեղեցիկ միտումներ» են։

Օրստօրէ կաւելանար նոցա համարումը՝ մինչ այդ իրենց արհամարհած դասակարգին վրայ։ Այժմ, կարծես, մի ինչ որ ներևոյթ հոգի կը զրդէր նրանց՝ սիրել ամբոխը, սիրել «ամբոխի արտադրած յուսատու սերունդը», զգուշանալ ամբոխի խրմնդրմանուանելէ են։

Բեռնակիրը հիպնոզացրել էր նրանց!

— Ինչ բան է այս, կը կրկնէր յանախ տիկին Լուսինեանը՝ իրեն հանդիպող ծանօթներին, — մենք մինչև այժմ կը կարծէինք, թէ մարդկութիւն ասելով պէտք է հասկանալ միայն մեզպէսներին։... Իսկ մեր շրջանակէն դուրս գտնուածներին մենք կը համարէինք երէք ընդունակութեան տէր. — մտաւորներ՝ բաղդաւորներիս զարգացնելու համար, դրամատէր՝ մեր մտայի ծանրոյքը

տեղէտեղ փոխադրելու համար, ձրիշներ՝ մեր առելիներին պատուհասելու համար... որ դրանք չ'պիտի համարձակէին պղծել մեր առանձնական արբուրիշները, դպչել մեր աստուածացրած դայլ «ես»ին կամ ո՛և է առնչութիւն ունենալ մեզ հետ։... Սակայն statuquoն բոլորովին հակառակը ցոյց տուաւ։... Այժմ ես հաւատացած եմ, որ կայ մեր շրջանէն դուրս մի հանրամատչելի ուրիշ «աշխարհ», ուր մարդկութիւնը կը ներկայանայ որպէս մի հսկայ, անխորտակելի բանակ՝ կազմուած առաքինի դիւցազուններէ, «մեծ հրաշագործներէ»... որոնք ընդունակ են գործել եւ յաջողութիւն գտնել այնպիսի ասպարիզում, ուր մենք, նիւթական ճոխութեան մէջ բարոյապէս այլանդակուած ու բթացածներիս անգործ լեզէոնը, առանց լեղապատառ լինելու փատպին մեզ ենթարկելու չենք կարող ոտք կոխել։... Վերջապէս մեր պարոն Տիգրանը (այդպէս էր մեր բեռնակիր հերոսի անունը) բառիս բուն նշանակութեամբ Հայ-Մարդ է։ Յանձին նրա մենք կը տեսնենք մեր արհամարհած դասակարգի բարոյա-ֆիզիքական տիպը։... Ես կը համարձակիմ ասել այդ ամենը առանց տատանումների,

որովհետև անհերքելի է, որ մեր Տիգրանը ամբոխի հարազատ ծնունդն է։...

Եւ, երբ, ա. Լուսինեանը «առանց տատանումների» կարտասանէր այդ խօսքերը և դեռ մի առանձին ինքնարտակայնութեամբ կասէր «մեր Տիգրանը» կարծես իրեն պատիւ համարելով, որ «առաքինի զիւցազնի» հետ գործ ունի։...

XVIII.

Ինչ կը վերաբերի օրիորդին։

Եթէ մեր ընթերցողներն հանդիպէին օրիորդ Լուսինեանի եւ բեռնակրի ազատասակցութիւններին՝ պիտի կարծէին, թէ այդ զոյգը յոյն փիլիսոփայի ակնարկած այն բարեկամական հոգին էր, որ երկու էակների մէջ կը բնակուէր։ Գուցէ ոմանք էլ կարծէին, թէ գոքա միմեանց ծնողաց կը պատկանէին։

Նոցա պարզ, անսեթեւեթ խօսակցութեան եւ նիստ ու կացի մտերմական ձեւերը, զէպ իրար ունեցած նոյնանման վերաբերմունքը՝ համեմուած անկաշառ սիրոյ մակարդով... — այդ ամենը միայն մտերմութեան դրոշմ կը կրէին։ Վերին աստիճանի հետաքրքրութիւն կար մանաւանդ նոցա գաղափարական ընդհարումներին մէջ, երբ նրանցմէ իւրաքանչիւրը կը ջանար այս կամ այն հարցում պաշտպանել իր հայեցակէտը։ Այդպիսի բոլէներին մարդ կարող էր տեսնել այդ զոյգին և միայն հիանալ, նախանձիլ։...

Խորհրդութեան հեռքը գուցէ կարելի լինէր մատնանիշ լինել նոցա արտաքինին — հագուստին — վրայ, եթէ միայն՝ այդ առթիւ նախօրօք մտածած և հոգացած չլինէր Պ. Լուսինեանը։

Վերջինս, ի սրտէ ցանկանալով առաջին և կենդանի օրինակ հանդիսանալ իրենպէսներին առջև ու հիմը ձգել Մերձեցման գործին, յանձն առաւ բաւական զոհողութիւններ։ Որպէսզի կարողանար հասնել իր նպատակին — նպաստել Մերձեցման գաղափարի ծաւալմանը պուրժուազիայի շրջանում, նա պէտք է յիշէր երազում լսած այն խօսքերը, թէ «... այստեղէն պիտի բաց կայէն շահագիտական բծախնդրութիւնները ...»։

* * *

Ընթերցողների մի որոշ շրջանի հետաքրքրութիւնն յագեցնելու համար կը յայտնեմ, որ նախկին հանդիպումէն հազիւ 4 ամիս անց՝ բեռնակիրն ամուսնացաւ օր. Լուսինեանին հետ, որով վերացաւ «գեղձի շառաւիղը շագանակենու հետ չ'պատաստելու տգեղ սովորութիւնը։»...

Նրանք մի բաղդաւոր զոյգ կազմեցին եւ այսօր, ի միջի այլոց, կը պարծենան ոչ թէ մի Աբրահէսով, այլ կէս տիւժին հրեշտակնման երեխանցով, որոնք մեծանալէ յետոյ շատ բան պիտի պատմեն մեզ։...

Վ Ե Ր Ջ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ՀՍՍՌ ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0313330

21.474